

Հարց

Ինչպե՞ս է որոշվում ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման համար կատարվող հատկացումների (ավտոճանապարհային մասհանումների) հաշվարկման օբյեկտը փոխանակման գործարքների դեպքում:

Պատասխան

Փոխանակման գործարքներ իրականացնելու դեպքում մասհանումների հաշվարկման օբյեկտը որոշելու համար հիմք է հանդիսանում այդ ապրանքների մատակարարման կամ ծառայությունների մատուցման պահին դրանց սովորաբար կիրառվող գինը: Այսինքն՝ մասհանումների հաշվարկման առումով փոխանակման գործարքը դիտվում է որպես երկու առանձին գործարքների իրականացում՝ մեկ ապրանքի կամ ծառայության վաճառք և մեկ այլ ապրանքի կամ ծառայության ձեռքբերում:

Հարց

Ավտոճանապարհային մասհանումների ի՞նչ դրույքաչափ է կիրառվում արդյունահանված ավազակոպճային խառնուրդների իրացումից ստացված հասույթի նկատմամբ:

Պատասխան

Համաձայն «Ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման համար կատարվող հատկացումների (մասհանումների) մասին» ԼՂՀ օրենքի 4-րդ հոդվածի՝ արդյունահանված ավազակոպճային խառնուրդների իրացումից ստացված հասույթի նկատմամբ մասհանումները հաշվարկվում են 0.5 տոկոս դրույքաչափով: Արդյունահանողները արդյունահանված ավազակոպճային խառնուրդները ներտնտեսական կարիքների համար օգտագործելու դեպքում մասհանումներ չեն կատարում:

Հարց

Ինչպիսի՞ կարգ է սահմանված ավտոճանապարհային մասհանումների հաշվարկման համար:

Պատասխան

Տնտեսավարող սուբյեկտները ավտոճանապարհային մասհանումները հաշվարկում են ինքնուրույն՝ մասհանումների տարբեր դրույքաչափերով հաշվարկվող գործունեության տեսակների մասով վարելով առանձնացված հաշվառում:

Մասհանումներ վճարողները յուրաքանչյուր եռամսյակ, մինչև եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացնում մասհանումների հաշվարկներ և նույն ժամկետում պետական բյուջե վճարում հաշվարկված մասհանումների գումարը:

Վճարողների կողմից մասհանումների գծով սխալների ինքնուրույն հայտնաբերման դեպքում սահմանված կարգով դրանց ճշգրտման արդյունքներով կարող են ներկայացվել ճշտված հաշվարկներ, որոնց հիման վրա կատարվում է այդ

Ժամանակաշրջանների համար մասհանումների պարտավորությունների վերահաշվարկ, եթե ճշտված հաշվարկները չեն վերաբերում հարկային մարմինների կողմից ստուգվող կամ ստուգված ժամանակաշրջաններին:

Հարց

Տուգանքի ի՞նչ չափ է նախատեսվում ստուգումներով մեկ տարվա ընթացքում երկրորդ անգամ ավտոճանապարհային մասհանումը թաքցնելու համար, եթե արձանագրվում է մասհանումների տարբեր տեսակների թաքցնում:

Պատասխան

Համաձայն «Ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման համար կատարվող հատկացումների (մասհանումների) մասին» ԼՂՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի՝ մասհանումները թաքցնելու կամ պակաս ցույց տալու համար խախտումն արձանագրվելուց հետո մեկ տարվա ընթացքում մասհանումները կրկին թաքցնելու կամ պակաս ցույց տալու դեպքում գանձվում է տուգանք՝ մասհանման գումարի 40 տոկոսի չափով՝ անկախ մասհանումների տեսակներից:

Հարց

ՊՈԱԿ-ները ազատվո՞ւմ են, արդյոք, ավտոճանապարհային մասհանումներից:

Պատասխան

«Ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման համար կատարվող հատկացումների (մասհանումների) մասին» ԼՂՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ ՊՈԱԿ-ները ավտոճանապարհային մասհանումներից ազատվում են անհատույց սպառման մասով. հատուցմամբ գործարքներ իրականացնելիս ավտոճանապարհային մասհանումները հաշվարկվում և վճարվում են ընդհանուր սահմանված կարգով: